Հրանտ Մաթևոսյան

Վազգենը

Վազգեն Սարգսյանի հետ իմ առաջին շփումները վերաբերում են իր 30-ամյա և իմ 55-ամյա հասակներին: Երեսուն տարին տղամարդու ամենագեղեցիկ հասակն է, բայց և հիսունհինգը չի տգեղ, քանի որ չի մոռացել իր երեսնամյա հասակը, այլև անցած ճանապարհի կշռելի վաստակ ունի՝ որ ով գիտի, մարմնավոր ու մտավոր կառույցն ինչքան էլ հաջող և ընթացքը ինչքան էլ սլացիկ, ով գիտի ունենալո՞ւ է իր երիտասարդ ընկերը, ամե՞ն ոք է ունենում: Շարժման ու բախման առաջամարտիկներից մեկի մասին խոսելիս, ուր պիտի որ մատնվելիս լիներ իմ կասկածոտ ու վերապահ վերաբերմունքը այդ մարդուն և այդ մարդու այդ տիպին, որ միայն իր խաղն է կարևորում և չի մտածում ծանր ու կործանիչ հետևանքների մասին, Վազգենը հանկարծ, իր նման միանգամից, մի տեսակ՝ ինձ թույլ չտալով նեղսիրտ ու նեղմիտ լինել և թույլ չտալով արատ տեսնել մարդու մեջ, իր նման արագ գլորեց.

- Գիտես ի՞նչ տղա էր... խաբել՝ վրացուն խոսող ոչխար էր ծախել՝ կրկեսի իբր թե կորած ոչխարը: Գիտես ի՞նչ տղերք կան... Ձեռներիս վրա մեռավ, ական էր փորձարկում:

Ինձ մնում էր հիմա ծիծաղել «խոսող ոչխարի» վրա, հետ քաշվել այդ խոսակցությունից, լռել և հետո հասկանալ, որ ես և Վազգենը տարբեր մարդիկ ենք, որ մարդկային զանգվածի գլխին ինքը կանգնած է գրկաբաց ու թևերը պարզած և այդ զանգվածի մեջ յուրաքանչյուր անհատի ու անհատականության ինքը տեսնում և ընկալում է այնպես, ինչպես նրանք կան՝ մարդկային բոլոր արատներով ու առաքինություններով, իսկ ես՝ ընդհակառակը՝ խորշում, վախենում, ինձանից վանում եմ յուրաքանչյուրի, ով մարդու իմ իդեալից մի քիչ տարբեր է, և այդպես է, որովհետև Վազգենը իրեն ի զորու է տեսնում նրանց

բոլորին գրկել, ընդգրկել, ենթարկել մի կամքի - նրանք Վազգենի համար կառավարելի են: Կարճ՝ Վազգենը իշխանական, հրամանատարական կոփվածքի ու լիցքերի մարդ էր, և ես կարող էի նրա գնդի զինվորը լինել միայն, նրա աշխարհի օրինապահ բնակիչը, իմ ճակատագրի ընթերցումը նրան թողնել և ամենքի մեջ ու ամենքի հետ վստահ լինել, որ նրա հայացքի ուղղությունը լույսի և հույսի շավիղ է դառնում և նրա դրած քայլը՝ ճանապարհի սկիզբ, նրա պարզած ձեռքը թշնամուն բարեկամ է անում և սև ամայությանը նետված նրա հայացքը բարեկամների բազմություններ է հառնեցնում:
Նա այդ էր, նա սպարապետ էր:
Կովկասյան, համակովկասյան սև արջի նրա զորեղ անձն ու ընթացքը վաղվա օրով եթե չվերաճեց սպիտակ ձիավոր սուրբ Սարգիսի, նրա պայծառ լուսավոր ցոլացումը վաղվա օրով իր վրա եթե մի սև բիծ ունեցավ - մենք՝ նրա ժամանակակիցներս ենք մեղավոր՝ ես և դուք. վաղվա սերունդները իրենց անցյալում, որ մեր այսօրն է, եթե չունեցան այդ սպիտակ ձիավոր սուրբ զորավարին - նրանց երթը շաղվելու ու կանգ է առնելու, ինչպես որ ինքը Վազգենն ու մենք էինք շփոթ խուճապի տրվելու, եթե մեր երթի գլխին չունենայինք Վարդանի ու Նժդեհի լուսեղեն պատկերները:
Ցեղիդ պատմության իմացությունը իհարկե առաքինություն է, առավել ևս՝ եթե այդ վերուվարող հորձանուտների մեջ դու քեզ ես տեսնում ու քոնն ես համարում և խրոխտին ու համառին, և ընկրկողին ու չքվողին, և լուսամիտ եզակիներին՝ յուրաքանչյուրին, բայց մեծ առաքինությունը այսօրը պատմություն տեսնելն է, այսօրվա հերոսին պատմական զրույցներից հյուսված հերոսների չափ մեծ ու անարատ ու լուսավոր ու սիրելի տեսնելը:
Եվ ուրեմն այսօրվա մեր խոսքը՝ իմ և բոլորիս խոսքը օրհնանքի ու փառաբանության խոսք է լինելու... փա՛ռք Վազգենին, փառք նրան ծնող ու սնող և իր ծնած-սնածին հավատացող ու լուսեղենացնող այս հավատավոր ժողովրդին:
5 մարտի, 2001թ.